

**Լ. Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՆ ՀԱՅ ԿՐՈՆԱԿԱՆ
ՏԵՔՍՏԵՐՈՒՄ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՐԴԻ
ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐՈՒՄ**

Կարծիք ատենախօսության մասին

Է. 00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտություններու թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացուող Լիանա Աւետիսեանի սոյն ատենախօսութիւնը ունի ներածութիւն, երեք գլուխ, եզրակացութիւններ, յապաւումներու ցանկ, օգտագործուած սկզբնաղբիւրներու եւ գրականութեան ցանկ, յաւելում, տեքստային աղիւսակներ, լուսանկաներ, քարտէզներ: Հայցորդի նպատակն է վերլուծել Ս. Ստեփանոս Նախավկայի մասին յիշատակութիւնները հայ եկեղեցական մատենագրութեան մէջ, բացայայտել սուրբի կերպարի աստուածաբանական եւ գաղափարական հիմնական շեշտադրումները հայ եկեղեցական մտածողութեան համակարգին մէջ, ուսումնասիրել Ս. Ստեփանոսի պաշտամունքին հետ կապված ժողովրդական պատկերացումները, հաւատալիքները եւ բանաւոր ասանդութիւնները, քննութեան առնել ժողովրդական միջավայրին մէջ սուրբին պաշտամունքին առնչուող տօնական, ուխտագնացութեան եւ ծիսական գործողութիւնները եւ այլն:

Առաջին գլուխը կը ներկայացնէ քրիստոնեայ նահատակներու պաշտամունքի ճեւաւորումը Երուսաղէմի ու անոր շրջակայքին մէջ: Այս վերլուծութիւնը ցոյց կու տայ, որ Ս. Ստեփանոսի կերպարի հայկական ընկալումը, իբրեւ հիմք ունենալով երուսաղէմեան ասանդոյթը, յետագային համալրուած է ազգային առանձնայատկութիւններով: Ս. Ստեփանոսի կերպարի եւ անոր անուան եկեղեցիներու կառուցման մասին վկայութիւններ մեզի փոխանցուած են հայկական միջնադարեան գրաւոր եւ վիմագիր արձանագրութիւններէն:

Երկրորդ գլուխը կը քննէ հայ պատմագրութեան մէջ Ս. Ստեփանոսի կերպարի արտացոլումը եւ անոր մասունքներուն պաշտամունքի սկզբնաւորումն ու դրելորումները: Լայն տեղ կը տրուի Ս. Ստեփանոսի սրբավայրերու աշխարհագրութեանը: Կ'ուսումնասիրուին ուխտավայրերու գործառոյթները, ժողովրդական

ուխտագնացութիւնները, ինչպէս նաեւ սուրբին եւ անոր հրաշագործ ներգործության մասին վկայող ժողովրդական պատկերացումները:

Երրորդ գլուխը կը ներկայացնէ Ս. Ստեփանոսի կերպարի արտացոլումը գրականութեան, բանահիւսութեան եւ պատկերագրութեան մէջ, ինչպէս նաեւ սուրբի անուան տարածումը հայկական հոգեւոր եւ աշխարհիկ անձնանուններուն մէջ:

Պէտք է նշել, որ աշխատութիւնը համապարփակ ուսումնասիրութիւն մըն է ու կարելոր ներդրում մը հայ եկեղեցւոյ սուրբերու կեանքին ու վարքին նուիրուած աւսումնասիրութիւններուն մէջ:

Ցանկալի պիտի ըլլար սուրբի ժողովրդականացման հետ նաեւ տրուէր անոր անուան շարք մը տարբերակները ժողովրդական խօսքին մէջ ու ուխտագնացութիւններէն ծիրէն դուրս անդրադարձ կատարուէր Ստեփան անուն կրող անդամին անուանկոչութեան տօնախմբութեան պարագաները ընտանիքէն ներս:

Կը գտնենք, որ ատենախօսութիւնը փայլուն իրագործում մըն է, եւ հայցը արժանի է բաւարարման:

Պաշտոնական ընդդիմախօս, պ.գ.դ.



Յակոբ Չոլաքեան

պ.գ.դ. Յակոբ Չոլաքեանի ստորագրութիւնը հաստատում են

ՀՀ ԳԱԱ հնագիտության և

ազգագրության ինստիտուտի փոխտնօրէն՝

14. 07. 2026 թ.



Տ. Դալայան